

Тифлисъ. Редакція „Мшакъ“

9. 11.

Այսպես ի դեր, կամ մարդու մահը գործը չէ դա-
դարեցնում, որովհետև ծանօթ լինելով գործի
ընթացքը, հետ, ընտանիքը կարողանում է սկսած
գործը շարունակել ու դրանով իր գոյութիւնը
ապահովել: Ահէի աշխատանքով դժուար է ըն-
տանիքի բոլոր պահանջները լրացնել, այդ պատ-
ճառով կանայք բացի տուն կառավարելուց,
ստիպված են տանից դուրսն էլ պարսպապնուց
ունենալ, որպէս զի աշխատանքի բոլոր ծան-
րութիւնը մէկի վրա չը բարձրի: Եւրօգայում
կնոջ ձգտումը դէպի սեփական աշխատանքը մօ-
ղայի հարց չէ, դա այժմ գոյութեան ինքզին
է դարձել, որի դեմ նախապաշարմունքը ստիպված
լռում է: Այնքոյ այժմ շատ միջոց ունի անկախ,
սեփական աշխատանք ունենալու՝ գրականու-
թիւն, դասաւարտութիւն, արուեստներ, գիշատու-
նեցութիւն, վաճառականութիւն, բժշկականու-
թիւն, նկարչութիւն, թատրօնական բեմ և

ցիօններն էին հաւաքուելու: Մեր քաղաքից պահանջում էին 12 մարդ, որոնցից վեցը պահեստի համար էին մնում, իսկ վեցը անյապաղ մտնելու էին ծառայութիւն: Այդ հրամանագրի համեմատ կամաւորներ նորայէտ ընդունվում էին և մեր քաղաքի կողմից վեց կամաւորներ ներկայացան, իսկ պահեստի վեց մարդիկը վիճակահանութեամբ ընտրվեցան, Նոյնպէս վարվեցին գաւառի գիւղական բնակիչները: Միւրիցիօնները յանձնվեցին ուսմ հարկն է և ուղարկվեցին իրանց ծառայութեան տեղը: Երկու ամիս չանցած այդ մարդիկը փախան, այնպէս որ մեր քաղաքի ներկայացրած վեց անձերից միայն մինն էր մնացել, երբ կառավարութիւնը արձակեց միւրիցիօններին: Դրանց օրառաւով մեր հասարակութիւնը մի խիստ յանդիմանութիւն կրեց բարձր իշխանութեանից:»

Մեր թղթակիցը գրում է մեզ ԱՍԱԼՖԱԼԱՔԻՅ հետեւեալը: «Շրջակայ գիւղերից մինչ մէջ, որի բնակիչները 138 տնկերից են բաղկանում, կան 3 քահանայ և այժմ բնակիչները պատրաստում են չորրորդին էլ ձեռնադրել տալ: Գիւղացիներից իւրաքանչիւրը տարեկան կէս կողցորեն և կէս կողց գործ է վճարում իւրաքանչիւր քահանային: Ձեռնադրվող չորրորդ քահանայի պատճառով խռովութիւն է ընկած գիւղի միւս քահանաների մէջ: Բայց ինչպէս երևում է այդ անձը այնու ամենայնիւ կը ձեռնադրվի, որովհետեւ նրա հայրը նոյնպէս քահանայ է և զանազան բարձրատիկան հոգեւորականներին բաւական ծառայութիւններ է արել և անում է: Զարմանալի է այն հանգամանքը, որ մինչդեռ հայերի մէջ ամեն տեսակ մասնագէտների մէջ մեծ պակասութիւն է դպացիում, միայն քահանաները մեղաւորում անչափ բազմաթիւ են:»

Մեզ գրում են ԱՍԱԼՖԱԼԱՔԻՅ հետեւեալը: «Մեր գաւառի մի քանի գիւղերի մէջ, ինչպէս լսում ենք, մի քանի քահանաներ հողեր իշխանութեանից բանադրանքի են ենթարկված, որովհետեւ ճաշոցների գները դեռ չեն վճարել: Գիւղացիները ստիպված են միտնութեան և թաղման համար քահանաներին հեռաւոր գիւղերից հրաւիրել: Ցանկալի էր իմանալ եկեղեցին է ճաշոցի համար, թէ ճաշոցը եկեղեցու համար: Ճաշոցների մասին իր ժամանակին բաւական գրվեցաւ: Մենք կարծում էինք, որ այժմ գոնե ժողովուրդը հանգիստ է թողած: Դուրս է գալիս որ սխալվել ենք: Ընթերցողներին յայտնի է, որ ճաշոցներից ստացած եկամուտը նշանակված էր էջմիածնի Գեորգեան ձեմարանի համար: Զարմանում ենք, որ դեռ եւս ապագիւններ կան: Զարմանում ենք, որ հայ գիւղացիները չեն ծախում իրանց վերջին չապիկը և փողը չեն վճարում, մասնաւոր ձեմարանի գեղեցիկ և գովելի ընթացքը տեսնելուց յետոյ: Հայ հասարակութիւնը չէ ճանաչում իր չարն ու բարին: ճաշոցների փողը չէ վճարում այն գեղեցիկ պտուղներ տեսնելուց յետոյ, որ նրան նուիրեց էջմիածնի ձեմարանը, իր 5 տարի զոյգութեանց յետոյ:»

Օրերումս մտաւ մեր խմբագրութիւնը էջմիածնի ձեմարանի նախկին շաշկերտներից մէկը և խնդրեց մեզ տպել մի յայտարարութիւն, որ նա կամենում է դասեր տալ հայերէն լեզուից և այլն: Ցայտարարութիւնը տպեցինք: Մի քանի անգամ երկրորդաբար եկաւ տեղեկանալու արդեօք ցանկացողներ կան թէ ոչ և ամեն անգամ բացասական պատասխան էր ստանում: Մի անգամ նոյն պատասխանը ստանալուց յետոյ երկրորդաբար տնուր ասաց. «Իբրեւ տեղեր հարցնում են, բայց հէջ որ իմանում են, որ ձեմարանում եմ սովորել չեն կամենում ինձ ընդունել: Իսկ մենք կարծում էինք յայտարարութիւնը տպելու ժամանակ, որ երկրորդաբար չափազանց շատ դասեր կունենայ, որովհետեւ աշակերտներ է հի անալի ձեմարանում, առաջնորդվել է գիտնալիս ուսուցիչներից, բարեխիղճ վերակացունների հակողութեան տակ է եղել: Ե՛ք ինչ արած, Հայ հասարակութիւնը չէ կարողանում գնահատել այն, ինչ որ լաւ և գեղեցիկ է:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ԴՈՒՅՈՒՆ» ԼՐԱԳԻՐ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԹԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայերի մէջ Կիլիկիայում մի շարժումն է պատրաստվում, որի նպատակն է Բերլինի դաշնագրի 61-դ յօդուածի համեմատ գոր-

ծադրել ընթրմանը: Զէյթունի բնակիչները ապստամբվել են Քուրդիստանի բեգերի դէմ: Հաջնայում հայերը ընդդիմանում են չեքիսներին Սիսի նահանգում Ահմէդ-փաշա հայերի հետ է գործում: Բ. Դուռը իմանալով Կիլիկիայի հայ ազգաբնակչության տրամադրութիւնը, պատուիրեց վերադարձնել անասունները իրանց իսկական տէրերին: Բայց հաստատ տեղեկութիւններից երևում է, որ Կիլիկիայի հայերը վճռել են զենամթի լինել միայն այն ժամանակ, երբ անկախութիւն ձեռք կը բերեն: Նոյնպէս այդպիսի դիտաւորութիւնը պահպանում են Կ. Պօլսի բնակիչ անուանի հայերը: Լօնդոնից, Կ. Պօլսից և Հնդկաստանից ուղարկվում են Կիլիկիա զէնքեր, պատերազմական պաշարներ և զրամական օգնութիւն: Կիլիկիայում ընդհանուր ապստամբութիւն անկախել է համարվում:

ԳԵՐՄԱՆԻԱ

Հեռագիրը հաղորդեց մեզ, որ սեպտեմբերի 16-ին գերմանական պարլամենտում սկսվեցին վիճաբանութիւններ սօցիալիստների դէմ ուղղած նոր օրէնքի նախագծի մասին: Այդ վիճաբանութիւնները սկսվեցին գերմանական փոխ-կանցլէր կոմս Օտտօ-ցու-Նաոլեի դէմ տեւեալ ծառով:

Ճնշ մտադիր չեմ մանրամասնաբար բացատրել ձեզ միացեալ կառավարութիւնների հայեացքների զարգացումն առաջարկած նախագծի մէջ սօցիալ-դեմոկրատների ամենքի համար վտանգաւոր ձգտումների մասին: Եւս կարծում եմ, որ վերջին ամիսներում հասարակական գործերի ընթացքին հետեւող ամեն մէկը պէտք է բոլորովին պարզ հասկանայ, թէ ինչպէս են վերաբերվում կառավարութիւնները դէպի այդ ամենքին յուզող խնդիրը, մի և նոյն ժամանակ նախագիծը պարունակում է իր մէջ այնպիսի մանրամասն և հիմնաւոր շարժառիթներ, այնպիսի որոշ բացատրութիւններ, որոնց համեմատ կառավարութիւնները անհրաժեշտ են համարում խառնվել գործի մէջ, որ եւս ստիպված կը լինի կրկնել բոլոր շարժառիթները, եթէ սկսէի ձեր առաջ նրանցից իւրաքանչիւրը պաշտպանել: Բայց այդ բանակցութիւնների շարունակութեան ժամանակ կարելի կը լինի նկարագրել միացեալ կառավարութիւնների դրութիւնը: Այժմ կասեմ կարճաւոք և բոլորովին զրականապէս, որ կառավարութիւնները անհրաժեշտ են համարում նախագիծ մէջ առաջարկածի նման մի զէնք ունենալ իրանց ձեռքում, որովհետեւ նոքա ուրիշ կերպ չեն կարող աջողութեամբ ընդդիմադրել այն վտանգներին, որոնցով սօցիալ-դեմոկրատական շարժումն սպառնում է պետութեանը և հասարակութեանը: Այդ վտանգների գոյութեան մէջ դուք ամենքդ, երեւի մի քանի բացառութեամբ, համոզված էք: Այս դէպքում եւս պէտք է կարծիք յայտնել այն ենթադրութեան դէմ, իբր թէ կառավարութիւնները յոյս ունեն որ առաջարկած միջոցները բաւական են սօցիալական շարժմանը ընդդիմադրելու և նրան բնաջնջ անելու համար: Ոչ: Ամենադժուար աշխատանքը ապագային է մնում: Պետութեան և ազատ ընկերութիւնների վրա, հասարակութեան և մասնաւոր անձանց վրա պարտականութիւն է դրած գործակցել, որ Աստուծոյ երկիւղը, հաւատարմութիւնը, աշխատասիրութիւնը, խնայողութիւնը և հասարակական գործերի ազատութիւնը արմատանան (գոհունակութիւն), որ սօցիալ-դեմոկրատիան ամուր հիմք չը գտնէ, որ այդ տարածված թէօրիաների ուրվականները անհետանան և վերջապէս, որ միջոցներ գտնվեն օրէնքի լոյսով ծածկված այդ շփոթութեանը վերջ դնելու:

Համար (գոհունակութիւն): Այս վերջին գործունէութիւնը անհրաժեշտ է սօցիալական շարժմանը աջողութեամբ ընդդիմադրելու համար: Այդպիսի իրական և զօրեղ միջոցներ գործ դնելով պետութիւնը, իմ կարծիքով, պաշտպանում է ոչ թէ միայն իրան, այլ և սօցիալ-դեմոկրատական շարժման ինտրիգներին ենթարկված ազգաբնակչության շահերը: («Այդ ձգտումն է, շարժումն): Այս քիչ խօսքերով կը բաւականանամ, բայց դիմում եմ ձեզ հետեւել խնդրեցով, եթէ դուք համոզված էք, կամ վիճաբանութիւնների ժամանակ կը համոզվէք, որ հարկաւոր են արտաքին կարգի միջոցներ գործածել, ուրեմն խնդրում եմ, տուէք մեզ սուր և իրական զէնք: Կիսամիջոցները կարող են աւելի վնասել, քան թէ օգնել (գոհունակութիւն աջ կողմից):»

Գերմանական փոխ-կանցլէրի ճառը տպելուց յետոյ հարկաւոր ենք համարում մի քանի տեղեկութիւններ հաղորդել գերմանական պարլամենտի զանազան կուսակցութիւնների արամադրութեան մասին այդ օրէնքի վերաբերութեամբ:

Պահպանողականների երկու բաժինները՝ գերմանական պահպանողականները և ազատ պահպանողականները կընդունեն օրէնքի նախագիծը առանց ընդդիմադրութեան կամ ամբողջապէս կամ այն փոփոխութիւններով, որոնց կառավարութիւնը համաձայնութիւն կը տայ: Այդ երկու բաժինները 114 ձայներ ունեն, իսկ ամբողջ պարլամենտի մեծամասնութիւնը կազմում են 199 ձայներ: Նախագիծը դէմ երեւի ձայն կը տայ ամբողջ կենտրոնը, նրանք, որոնք կենտրոնի հետ են քուէարկում (ընդամենը 103 ձայներ), լեհացիներ (14 ձայներ), սօցիալ-դեմոկրատներ (9 ձայներ), էյզլացիներ (11 ձայներ), վերջապէս առաջադէմները (26 ձայներ): Ուրեմն նախագիծը դէմ կը լինեն 154 ձայներ: Ուրեմն գործը վճռող նշանակութիւն կունենայ այն դրութիւնը, որ կընդունեն ազգային-ազատամիտները, որոնք 97 ձայներ ունեն: Ինչ կը վերաբերի առաջադէմներին, նոքա երկու ժողով ունենալուց յետոյ վճռեցին, որ նախագիծը այնպէս ինչպէս որ կայ ընդունել կամ նրա մէջ փոփոխութիւններ անել անկարելի է: Այնու ամենայնիւ առաջադէմները ձայն կը տան, որ նախագիծը յանձնվի մասնագործներին, որպէս զի միջոց ունենան նկատողութիւններ անել նախագիծի սկզբունքի կամ ձևի դէմ և փորձել այնպէս խմբագրել նախագիծը, որ լաւացներ այժմեան օրէնսդրութիւնը, մի և նոյն ժամանակ իրաւունքների հաւասարութիւնը պահպանելու: Ինքն լատ իրեան հասկանալի է, որ այս ձգտումները չեն կարող իրագործվել: Բոլորովին ուրիշ է ազգային-ազատամիտների դրութիւնը, որոնք կամենում են համաձայնվել կառավարութեան հետ, նախագիծ մէջ մի քանի այնպիսի փոփոխութիւններ անելով, որոնք նրան չը զգնէին բացառական բնաւորութեանը: Ազգային-ազատամիտները քննում էին նախագիծը չորս ժամ տեւող ժողովում: Թէպէտ դրանց վիճաբանութիւնները զաղտնի են պահվում, բայց հաստատ յայտնի է, որ առաջին վիճաբանութիւններից յետոյ իսկոյն երեւցան անհամաձայնութիւններ այդ կուսակցութեան աջ և ձախ բաժիններում: Աջակողմեան բաժինը կամենում է անպատճառ համաձայնվել կառավարութեան հետ, եթէ կարելի է փոփոխել նախագիծը, բայց եթէ կառավարութիւնը ընդդիմանայ փոփոխութիւններին, այն ժամանակ օրէնքը ամբողջապէս ընդունելու քախտից բաժինը պարլամենտի անդամները քննում անդամ լասկերի առաջնորդութեամբ պահանջում է, որ նախագիծը ընդունվելուց առաջ, արմատական փոփոխութիւնների ենթարկվի: Ուրեմն հարցը նրանումն է թէ ազգային-ազատամիտներից քանի անդամներ

կառավարութեան կողմը կը լինեն: Եթէ այդ կուսակցութեան մեծամասնութիւնը չը քուէարկի յօդուտ կառավարութեան, այն ժամանակ միայն կարող է օրէնքը ընդունվել: Լուր կայ, որ եթէ օրէնքը չընդունվի, կայսր Վիլհելմը նորից կարձակէ պարլամենտը և նոր ընտրութիւններ կը նշանակէ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

—Տրապիզոնից լրագրիւններին հաղորդում են, որ այնտեղ հասել են երկու հազար թիւրք գերիներ: Մնացած հինգ հազար գերիները Հուսէյն-փաշայի հետ դեռ եւս գտնվում են Բաթումի մէջ: Լազերը բոլորովին հանգիստ են:

—«Բէյութերի ընկերութեանը» Կ. Պօլսից հեռագրում են, որ Մուսա-փաշա արդէն հասել է Երզրում քաղաքը ուսանելից ընդունելու համար: Ալաշկերտ թիւրքաց կանոնաւոր զօրքեր են ուղարկված այնտեղ կարգ պահպանելու համար:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԻՕՆ, 14/26 սեպտեմբերի Այստեղ հեռագրում են Սիմալայից հետեւեալը. «Զը նայելով որ զենուորական պատրաստութիւններ են տեսնվում, կարծում են, որ կառավարութիւնը մտադիր է հետեւել անցքերի ընթացքին և հսկել Աֆգանիստանի էմիրի գործողութիւնների վրա, առաջ քան թէ յարձակվել Աֆգանիստանի վրա:»

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 սեպտեմբերի «ԴՈՒՅՈՒՆ» լրագրին Ցէտինիէից հեռագրում են. «Զէրնօգորիայի սահմանի ուղղութեամբ հիւսիսային կլանիսցում բնակվող կաթօլիկները հակվում են այդ իշխանութեան կողմը և համաձայն են գաղթել Զէրնօգորիա, եթէ կապահովեն նրանց կրօնի ազատութիւնը և առաջվայ հողերի փոխարէն կը տան ուրիշ տեղեր:»

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 սեպտեմբերի Երեւել ջրի վրա թողնել «Նայեգզնիկ» շոգենաւը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 սեպտեմբերի Պետական բանկի 5% տոմսը առաջին շրջանի արժէ 96 ռ. 75 Կ., երկրորդ 96 ռ., երրորդ 95 ռ. 50 Կ., չորրորդ 96 ռ., ներքին 5% տոմսը փոխառութեան տոմսը արժէ 232 ռ. 25 Կ., երկրորդ 228 ռ. 50 Կ., արեւելան 92 ռ. 75 Կ., ոսկի 8 ռ. 8 Կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 24³/₈ պէնս, ուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 207 մարկ 50 Ֆէնիգ, Փարիզի վրա 256 Ֆրանկ: Տրամադրութիւնը թող է:

ԼՕՆԻՕՆ, 18/30 սեպտեմբերի: Կալիւտայից «Times» լրագրին հեռագրում են, որ Աֆգանիստանի հետ պատերազմելու պատրաստութիւնները շարունակվում են եռանդով: Շիր-Ալին զենուորական ոյժերի մասին ոչինչ յայտնի չէ: Կարծում են, որ սահմանակից թշնամի ցեղերը կարող են դուրս բերել 100,000 պատերազմողներ: Հնդկաստանի կառավարութիւնը չէ վերադառնայ Կալկատա: Այս հանգամանքը հաստատում է, որ Հնդկաստանի փոխարքան յոյս չէ դնում խաղաղութեան պահպանվելու վրա: Գնենալ 26 մեքերին հասաւ Սիմալ: Երկու ուսուցիչները դեռ եւս մնում են Կարբուլի մէջ: Գնենալ Արամով կը վերադառնայ Կառնֆմանի գլխաւոր բանակը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 սեպտեմբերի: Պետական բանկի 5% տոմսը առաջին շրջանի արժէ 96 ռ. 87 Կ., երկրորդ 96 ռ., երրորդ 95 ռ. 50 Կ., չորրորդ 95 ռ. 62 Կ., ներքին 5% տոմսը փոխառութեան տոմսը արժէ 231 ռ. 50 Կ., երկրորդ 227 ռ. 50 Կ., արեւելան 92 ռ. 55 Կ., ոսկի 8 ռ. 15 Կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 24 պէնս: Տրամադրութիւնը հանգիստ է:

